*ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ*

*ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ*

# 2020-2022

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

## ԵՎ 2020

## ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

2016-2018թթ. իրականացված զբոսաշրջության զարգացման ծրագիրը միտված է եղել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության բարձրացմանը: Ծրագրային միջոցառումները ուղղված են եղել պահպանելու զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճը:

**Եթե 2017 թվականին միջազգային այցելությունների թիվը կազմել է 1.494.779 զբոսաշրջիկ՝ 2016 թվականի համեմատ աճելով 18.7%, ապա 2018 թվականին ցուցանիշը կազմել է 1. 651 782՝ 2017 թվականի համեմատ աճելով 10.5%:**

Միջազգային այցելությունների դինամիկան 2016-2018 թթ․

| Տարիներ | Ժամանած զբոսաշրջիկների քանակը | աճը % |
|---|---|---|
| 2016 | 1.259.657 | 2016/2015- 5.7% |
| 2017 | 1.494.779 | 2017/2016- 18.7% |
| 2018 | 1.651.782 | 2018/2017- 10,5% |
| 2019 | 1.783.925 կանխատեսում | 2019/2018- 8,0% |

Զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրային միջոցառումները 2017–2019թթ.ուղղվել են մարքեթինգային միջոցառումների իրականացմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը:

Զբոսաշրջության ոլորտում հիմնական ֆինանսական ցուցանիշներն են ներգնա ժամանումների քանակից կախված ստացվող եկամուտներն են՝ Հայաստան ժամանած յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսում է 800 - 900 ԱՄՆ դոլար: Հետևաբար 2017-2019 թթ. զբոսաշրջությունից ստացվող եկամուտները կազմել են համապատասխանաբար.

2017-ին՝ մոտ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար

2018-ին մոտ 1.3 մլրդ ԱՄՆ դոլար

2019-ին՝ կանխատեսում՝ ավելի քան 1,4 մլրդ ԱՄՆ դոլար:

**Ներքին զբոսաշրջային այցելություններ**

2016 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 979.968, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 12.4%-ով:

2016 թվականին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը փորձագիտական գնահատականներով կազմել է շուրջ 245 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներքին զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):

2017 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.086.707 կամ 2016թ. նկատմամբ ցուցանիշն աճել է 10.9%-ով:

2017 թվականին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ 272 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

2018 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.092.322 կամ 2017թ. նկատմամբ ցուցանիշն աճել է 0. 5%-ով:

2018 թվականին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը փորձագիտական գնահատականներով կազմել է շուրջ 273 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ըստ կանխատեսումների 2019 թ-ին 5%-ի աճի պայմաններում ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կկազմի շուրջ 1. 15 մլն և կապահովի եկամուտ մոտ 286 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

2016-2018 թվականների աճը պայմանավորվել է նաև ակտիվ մարքեթինգային միջոցառումների իրականացմամբ: 2016-2018 թվականներին ծրագրային միջոցառումների իրականացման արդյունքում ընդլայնվել է Հայաստան զբոսաշրջային այցելությունների

աշխարհագրությունը: Այցելությունների հիմնական աճը գրանցվել է Ռուսաստանից, Իրանից, Վրաստանից, ԱՄՆ-ից և եվրոպական մի շարք երկրներից: Համաձայն ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի 2019թ. հունվար-մարտին Հայաստան ընդհանուր այցելությունների թիվն ըստ քաղաքացիության կազմել է 719531, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 5.2 %, որից զբոսաշրջային այցելությունները կազմե են 364489, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 5.2 %: Այցելությունների հիմնական աճը գրանցվել է Ռուսաստանից, ԱՄՆ-ից և եվրոպական մի շարք երկրներից (Մեծ Բրիտանիա, Լեհաստան, Իտալիա, Ֆրանսիա, Ավստրիա): Կտրուկ աճ է արձանագրվել նաև ԱՄԷ-ից, Ֆիլիպիններից, Ճապոնիայից, Չինաստանից, Հնդկաստանից:

**Ենթակառուցվածքների բարելավում՝** 2016-2018թթ. հյուրանոցաշինության բնագավառում կառուցվել են հյուրանոցային տնտեսության օբյեկտներ.
2016 թ-ին՝ 261 համար, 2017 թ-ին՝ 333 համար, 2018 թ-ին՝ 350 համար:

ՀՀ տարածքում գործում է ավելի քան 550 հյուրանոցային տնտեսության օբյեկտ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար)՝ ապահովելով մոտ 30 000 ննջատեղ:

Գործընթացը շարունակական է և նախատեսվում է նաև մի շարք ՀՏՕ-ների կառուցում: ՀՀ-ում գործում են «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Պլեյս», «Դաբլ Թրի», «Ռեդիսսոն Բլյու» միջազգային հեղինակավոր հյուրանոցային խմբերին պատկանող հետևյալ հյուրանոցներ: Շարունակվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների կամավոր որակավորման գործընթացը՝ ներկայում որակավորված են 13, որոնցից 9-ը Երևանում, 4-ը՝ ՀՀ մարզերում:

**2016-2018 թթ.** վարվող պետական քաղաքականության կարևորագույն հենասյուներից է զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացումը, և այդ ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքներն ուղղված՝ ներկայացնելու Հայաստանը որպես կրոնական, ագրո, էկո, արկածային, գինու, գործարար, բուժական և առողջարանային զբոսաշրջության գրավիչ ուղղություն:

Նպատակ ունենալով ապակենտրոնացնել զբոսաշրջությունը դեպի հանրապետության մարզեր և գյուղական բնակավայրեր, երկարաձգել զբոսաշրջային սեզոնը, վերականգնել և պահպանել տեղական ավանդույթները, ինչպես նաև նպաստել համայնքների տնտեսական ակտիվացմանը՝ պետական աջակցությամբ ձևավորվել, զարգանում և արդեն իսկ միջազգային շուկայում գնալով ճանաչելի են դառնում ավանդական փառատոնները՝ ոչ միայն Հայաստանում, այլ արդեն միջազգային շուկայում ճանաչված ու սպասված են դառնում Արենիի “Գինու”, Ախթալայի “Ուտեստների մրցույթ փառատոնը”, Հնաբերդի “Տոլմայի”, Գորիսի “Թթի”, Խաչիկի “Գաթայի” և այլ ավանդական փառատոներն ու միջոցառումները:

Հայաստանի հասանելիության բարձրացմանն էապես նպաստել է սահմանային անցման գործընթացների դյուրացման քաղաքականությունը: Ավելի քանի 40-ով ավելացել է այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիները ազատված են մուտքի արտոնագիր ստանալու պահանջից: Ներկայումս շուրջ 60 երկրների քաղաքացիների համար գործում է առանց արտոնագրի մուտքի ռեժիմ, ավելի քան 70 երկրների քաղաքացիներ կարող են մուտքի արտոնագիր ստանալ սահմանային անցակետերում կամ առցանց: Մուտքի արտոնագիր ստանալու համար պետական տուրքի դրույքաչափը էապես նվազեցվել և կազմում է 3000 դրամ:

2016-2018թթ. զբոսաշրջության ոլորտի զարգացմանը միտված միջոցառումները իրականացվել են տարեկան ծրագրի շրջանակներում, ինչի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է.

2016 թվականին՝ 188,4 մլն. դրամ,
2017 թվականին՝ 100 մլն. դրամ,

*2018* թվականին՝ 200 մլն.դրամ:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2020-2022թթ. պետական քաղաքականության հիմնական ***նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային տնտեսական զարգացման գործընթացում՝ պայմանավորված.***

1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,
2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,
3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Առնվազն միջնաժամկետ հատվածում զբոսաշրջության ոլորտում ծրագրային միջոցառումների հիմնական նպատակն է հայրենական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովումը, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացումը:

Նպատակների իրագործումը նպատակաուղղված է տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը, ապահովելու միջազգային այցելությունների դինամիկ աճը:

2020-2022թթ. զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք միջոցառումները նպատակաուղղված կլինեն միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը նորովի ներկայացմանը, համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար գրավիչ և ապահով երկրի նկարագրի ամրապնդմանը և կատարելագործմանը:

Միջոցառումների իրականացումը կնպաստի հետևյալ արդյունքների ապահովմանը.

- Հայաստան զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին,
- Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,
- պատմամշակութային և բնության ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը:

Վերոնշյալ նպատակները համահունչ և փոխկապակցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրային միջոցառումների ցանկում ընդգրկված նպատակային ուղղությունների հետ, դրանք բխում են ՀՀ կառավարության գործունեության ընդհանուր նպատակներից և կրում են շարունակական ու կայուն բնույթ:

**2020-2022 թթ. նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝**

- համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
- նպաստել նոր, մրցունակ արդյունքի ձևավորում, Հայաստանի ամբողջ տարածքում ավանդույթների և ծիսակատարությունների վերականգնմանը, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը և վերականգնմանը, և Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորմանը,
- նպաստել զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանը՝ ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը,
- միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում:

| Նպատակը | Ծրագրի դասիչը և անվանումը | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | | |
| | | | Ցուցա-նիշը | Ժամ-կետը | Ցուցա-նիշը | Ժամ-կետը | |
| ***Միջազգային զբոսաշրջային այցելությունների*** | ***1190 Զբոսաշրջության զարգացման*** | ***Միջազգային այցելուներ*** | ***10.5%*** | ***2018թ*** | ***8.0%**** | ***Յուրաքանչյուր*** | ***Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային ձևերի*** |

| աճ | ծրագիր | | | | | տարի | զարգացում, ենթակառուցվածքների բարելավում, |
|---|---|---|---|---|---|---|---|

*)հաշվի առնելով ոլորտի յուրահատկությունը և համաշխարհային զարգացումների միտումները՝ առնվազն տարեկան 8% աճը համարվում է լավագույն ցուցանիշ:*

## 3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2020-2022 թվականներին զբոսաշրջության ոլորտի գերակայություններն ուղղված կլինեն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված զբոսաշրջության ոլորտի հիմնական գերակա ուղղությունների՝ ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացմանը:

Զբոսաշրջության ոլորտի գերակայությունները բխում են ոլորտի պետական քաղաքականությունից և ռազմավարության ուղղություններից, պետական զարգացման տարեկան ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով նախատեսվող զարգացման միտումներով:

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք (գոյություն ունեցող) ծախսային ծրագրերը (պարտավորությունները)՝ տվյալ դեպքում «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերը մշակում և իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության կոմիտեն՝ որպես ոլորտի պատասխանատու կառույց:

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք (գոյություն ունեցող) ծախսային ծրագրերը (պարտավորությունների) մեծապես կնպաստեն ոլորտի գերակայությունների զարգացման և պետական աջակցության ծրագրային նպատակների և գերակայությունների իրականացմանը:

| Հ/Հ | Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|---|
| **1** | **Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում՝** Հայաստանի շարունակական ինտեգրում միջազգային զբոսաշրջային շուկա, համաշխարհային շուկայում Հայաստանի որպես կայուն, ապահով, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր նկարագրի շարունակական կատարելագործում | «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության ծրագրի 5.7 «Զբոսաշրջություն» մաս, ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ին արձանագրային որոշմամբ հաստատված Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ |
| **2** | **հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում՝** նոր, մրցունակ արդյունքի ձևավորում, Հայաստանի ամբողջ տարածքում ավանդույթների վերականգնում, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը և վերականգնմանը, և Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորմանը նպաստում | |
| **3** | **ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը նպաստում՝** զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործում | |
| **4** | **Միջազգային համագործակցության զարգացման ապահովում՝** միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում, այլ երկների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում | |

## 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

***Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:***

«Աջակցություն զբոսաշրջության զարգացման» պետական ծրագրի իրականացման ֆինանսավորումն իրականացվում է 2003 թվականին ընդունված «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն:

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[1] | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները[2] | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը[3] |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1109 | 11002 | «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» | Պարտադիր | | «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք |
| | | | | | |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

### 4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ 2019-2021 թթ. պետական ՄԺԾԾ-ով և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ծախսային պարտավորություններ հանդիսացող զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) նպաստում են զբոսաշրջության ոլորտի ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Մասնավորապես որպես գոյություն ունեցող ծախսային ծրագրեր հանդիսացող «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան ծրագրերի շրջանակներում նախատեսված ծրագրային շարունակական միջոցառումները նպատակաուղղված են հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության և ճանաչելիության բարձրացմանը, տարածքային համաչափ զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը:

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերի իրականացման համար կանխատեսվում է բավարար ֆինանսական միջոցների հատկացում, որը ՄԺԾԾ ժամանակահատվածում կուղղվի զբոսաշրջության ոլորտի պետական աջակցության (ըստ համապատասխան տարիների ծրագրային միջոցառումների) շրջանակների ընդլայնմանը և բազմազանեցմանը:

Զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք ծախսային պարտավորությունների գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները պայմանավորված են ինչպես ոլորտի պետական քաղաքականության արդյունավետ իրականացմամբ (միջազգային

այցելությունների դինամիկ աճի պահպանում, դրա հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում, ստացվող եկամուտների ավելացում), այնպես էլ պետական քաղաքականության իրականացման հետ անմիջական առնչություն չունեցող գործոնների առկայությամբ:

Զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման, մասնավորապես ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերի գծով ծախսային գործոնների ազդեցության մեղմման նպատակով անհրաժեշտ է տարեցտարի ընդլայնել ոլորտին ուղղված պետական աջակցության շրջանակները:

## 4.3. Նոր նախաձեռնությունները

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում զբոսաշրջության ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի շրջանակներում «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան ծրագրերից բացի այլ ծրագրեր, որպես նոր նախաձեռնություններ, չի նախատեսվում իրականացնել, հետևաբար 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի առնչությամբ չի ներկայացվում համապատասխան տեղեկատվություն և չի լրացվում 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի N3 հավելվածում ներկայացված աղյուսակը:

## 5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Զբոսաշրջության կոմիտեի կողմից, որի ենթակայությամբ չկան գործող պետական կազմակերպություններ, և 2020-2022թթ. բացի պետական բյուջեից ստացվող եկամուտների բացակայում են այլ եկամուտների աղբյուրներ, ուստի չի լրացվում 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված N7-ում ներկայացված աղյուսակը:

## 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում զբոսաշրջության ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի շրջանակներում Զբոսաշրջության զարգացման տարեկան (2020թ., 2021թ. և 2022թ.) ծրագրերն անուղղակի առնչվում են տարածքային զարգացման ծրագրերին: Ինքնին չհանդիսանալով որպես զուտ տարածքային զարգացման ծրագրեր, հիմնվելով ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա նպաստում են երկրի, հատկապես համայնքային բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը և համահունչ են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում ամրագրված ՀՀ տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2020-2022թթ. արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվելու են ֆինանսական միջոցներ Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում:

Սույն հայտին կից ներկայացվում է Ծրագրի նկարագրությունը համապատասխան հիմնավորված հաշվարկներով մշակված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020-2022 թթ. ժամանակահատվածի համար զբոսաշրջության ոլորտի ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է 2019-2021 թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի N10 հավելվածում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը ծրագրի իրականացումը կուղեկցվի որոշ ռիսկային գործոններով, մասնավորապես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի (տարադրամի տատանումներ) բացասական ազդեցությամբ պայմանավորված, քաղաքական անկայունությամբ երկրում և տարածաշրջանում պայմանավորված, ինչպես նաև այլ անկանխատեսելի ռիսկային գործոններով: Այս հանգամանքն իր բացասական ազդեցությունը կթողնի 2019-2021թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում զբոսաշրջության ոլորտի զարգացման, ծրագրային նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա:

Ռիսկերի վերլուծության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունն ամփոփ ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

| N | Ռիսկի նկարագրությունը | Երևույթի հանդես գալու հավանականությունը | Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները |
|---|---|---|---|---|
| 1 | Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ | 3 | Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | ՀՀ կառավարության կողմից նպատակաուղղված պետական քաղաքականության իրականացում |
| 2 | ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական և դրամավարկային քաղաքականություն | 2 | Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | ՀՀ կառավարության կողմից նպատակաուղղված տնտեսական և դրամավարկային քաղաքականության իրականացում |
| 3 | Տարածաշրջանում և երկրում քաղաքական անկայուն իրավիճակ | *5* | Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Արտաքին լրատվական միջոցների նպատակաուղղված գործունեության ակտիվացում |
| 4 | Զբոսաշրջիկների կյանքին և առողջությանը սպառնացող վտանգ | *4* | Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Հատուկ միջոցների կիրառում, նպատակաուղղված միջոցառումների իրականացում /կանխարգելիչ միջոցներ/ |
| 5 | Կլիմայական փոփոխություններ | *4* | Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Ֆորս-մաժորային իրավիճակներում դժվար է միջամտություն ցուցաբերել |

## ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ[1]

| | |
|---|---|
| Ծրագիրը՝ | 1190, «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» |
| Միջոցառումը՝ [3] | 11002, «Աջակցություն  զբոսաշրջության զարգացմանը |
| Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝ [4] | «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» |

**Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները**

| Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը | Գործոնի տեսակը | Չափի միավորը | Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը | Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը | | | | | Հիմնավորում ներ/ Պատճառներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | |
| Գնային և ոչ գնային գործոններ՝ | | | | | | | | | |
| Ինստիտուցիոնալ բարեփոխումներ | գնային գործոն | հազ.դրամ | «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք | 0.0 | 8.000.0 | 10.300.0 | 0.300.0 | 0.300.0 | |
| Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային միջոցառումներ | գնային գործոն | հազ.դրամ | ----”---- | 133.970.0 | 117.054.4 | 197.000.0 | 190.000.0 | 1190.000.0 | |
| Հայկական  զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում | գնային գործոն | հազ.դրամ | ----”---- | 29.357.5 | 22.000.0 | 20.000.0 | 30.000.0 | 30.000.0 | |
| Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում | գնային գործոն | հազ.դրամ | ՀՀ կառավարության 2004թ.հունիսի 10-ի N946-Ն որոշում | 4.500.0 | 6.000.0 | 194.000.0 | 115.000.0 | 110.500.0 | |
| Միջազգային համագործակցություն | գնային գործոն | հազ.դրամ | «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք | 3.000.0 | 8.520.0 | 40.000.0 | 50.000.0 | 50.000.0 | |
| Այլ  ծախսեր | գնային գործոն | հազ.դրամ | ոչ | 0.0 | 77.092.6 (պահպան ման ծախսեր) | 1.000.0 | 600.0 | 600.0 | |
| ԱԱՀ | գնային գործոն | հազ.դրամ | ՀՀ հարկային օրենսգիրք | 34.166.0 | | **92.460.0** | **77.180.0** | **76.280** | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **200000.0** | **286400,0** | **554800.0** | **463080.0** | **457680.0** | |

### Աղյուսակ 2. Ծախսերի ամփոփ հաշվարկը (առանց ծախսային խնայողությունների գծով առաջարկների ներառման)[11]

| Ծախսային տարրերը[12] | <Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը> [13] | | | | | <Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը>[13] մլն. դրամ | | | | | … | Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)[14] | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2018թ. փաստ. | 2019թ. բյուջե | 2020թ. | 2021թ | 2022թ. | 2018թ. փաստ. | 2019թ. բյուջե | 2020թ. | 2021թ. | 2022թ. | … | 2018թ. փաստ. | 2019թ. բյուջե | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| Ընդամենը փոփոխության ենթարկված ծախսեր (հազ. դրամ)[15], այդ թվում ըստ առանձին ծախսային տարրերի՝ | X | X | X | X | X | X | X | X | X | X | … | | | | | |
| 1. Ինստիտուցիոնալ բարեփոխումներ | | | | | | - | 8.0 | 10.3 | 0.3 | 0.3 | | - | 8.0 | 10.3 | 0.3 | 0.3 |
| 2.Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային միջոցառումներ | | | | | | 133.9 | 117.1 | 197.0 | 190.0 | 190.0 | | 133.9 | 117.1 | 197.0 | 190.0 | 190.0 |
| 3.Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում | | | | | | 29.4 | 22.0 | 20.0 | 30.0 | 30.0 | | 29.4 | 22.0 | 20.0 | 30.0 | 30.0 |
| 4.Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում | | | | | | 4.5 | 6.0 | 194.0 | 115.0 | 110.5 | | 4.5 | 6.0 | 194.0 | 115.0 | 110.5 |
| 5.Միջազգային համագործակցություն | | | | | | 3.0 | 8.5 | 40.0 | 50.0 | 50.0 | | 3.0 | 8.5 | 40.0 | 50.0 | 50.0 |
| 6.Այլ ծախսեր | | | | | | - | 77.1 | 1.0 | 0.6 | 0.6 | | - | 77.1 | 1.0 | 0.6 | 0.6 |
| ԱԱՀ | | | | | | 29.2 | 47.7 | 92.5 | 77.2 | 76.3 | | 29.2 | 47.7 | 92.5 | 77.2 | 76.3 |
| | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը փոփոխության չենթարկված ծախսեր (հազ. դրամ)[16] | X | X | X | X | X | X | X | X | X | X | … | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ (հազ. դրամ)[17] | X | X | X | X | X | X | X | X | X | X | … | 200.000,0 | 286.400,0 | 554.800.0 | 463.080.0 | 457.680.0 |

## Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

### ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | Ծրագիր/Միջոցառում | 2018թ. Փաստացի (հազ. դրամ) | 2019թ սպասվող (հազ. դրամ) | 2020թ (հազ. դրամ) | 2021թ (հազ. դրամ) | 2022թ (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | | | | | | |
| *1190* | «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» | 200.000,0 | 286.400,0 | 554.800.0 | 463.080.0 | 457.680.0 |

**ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

| Նպատակը | Ծրագրի դասիչը և անվանումը | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | | |
| | | | Ցուցանիշը | Ժամկետը | Ցուցանիշը | Ժամկետը | |
| Միջազգային զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճի ապահովում | *1190* «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» | | | | | | |
| | | *Զբոսաշրջիկների թվի տարեկան աճ, %* | *10,5* | *2018թ* | *Առնվազն 10.0* | *2020թ* | ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ընդգրկված զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշ |

**ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

| Ծրագրի դասիչը | Ծրագրի անվանումը |
|---|---|
| 1190 | «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» |

**Ծրագրի միջոցառումները**

| Ծրագրի դասիչը՝ | 1190 | Ցուցանիշներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը՝ | 11002 | 2018թ փաստացի | 2019թ սպասվող | 2020թ | 2021թ | 2022թ | *շարունակական* |
| Միջոցառման անվանումը՝ | Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը | | | | | | |
| Նկարագրությունը՝ | Միջոցառումն ընդգրկում է. ակտիվ և թիրախավորված մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում, միջազգային համագործակցություն | | | | | | |
| Միջոցառման տեսակը՝ | Ծառայությունների մատուցում | | | | | | |
| *Միջոցառումն իրականացնողի անվանում՝* | Զբոսաշրջության կոմիտե | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակական | 1. Ինստիտուցիոնալ բարեփոխումներ | - | 8.0 | 10.3 | 0.3 | 0.3 | |
| | 2.Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային միջոցառումներ | 133.9 | 117.1 | 197.0 | 190.0 | 190.0 | |
| | 3.Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում | 29.4 | 22.0 | 20.0 | 30.0 | 30.0 | |
| | 4.Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում | 4.5 | 6.0 | 194.0 | 115.0 | 110.5 | |
| | 5.Միջազգային համագործակցություն | 3.0 | 8.5 | 40.0 | 50.0 | 50.0 | |
| Ժամկետայնության | Ենթամիջոցառումները նախատեսվում են տարեկան կտրվածքով և շարունակական միջնաժամկետ ժամանակահվածում | Տարեկան կտրվածքով | Տարեկան կտրվածքով | Տարեկան կտրվածքով | Տարեկան կտրվածքով | Տարեկան կտրվածքով | |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)** | | x | x | x | x | x | Շարունակա-կան |

## Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

| Ծրագրային դասիչը | | Ծրագիր /Միջոցառում | 2018թ փաստ. (հազ. դրամ) | | | | 2019թ սպասվող (հազ. դրամ) | | | | 2020թ բյուջե (հազ. դրամ | | | | 2021թ բյուջե (հազ. դրամ) | | | | 2022 թ բյուջե (հազ. դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | … | Ընդամենը | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | … | Ընդամենը | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | … | Ընդամենը | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | … | Ընդամենը | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | <<Հոդվածի անվանումը և կոդը>> | … |
| 1190 | | «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | 11002 | Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը | 200.000,0 | | | | 286.400,0 | | | | 554760.0 | | | | 463080.0 | | | | 457680.0 | | | |

| Ծրագրային դասիչը | | Ծրագիր /Միջոցառում | 2018թ փաստ. (հազ. դրամ) | | | | 2019թ սպասվող (հազ. դրամ) | | | | 2020թ բյուջե (հազ. դրամ | | | | 2021թ բյուջե (հազ. դրամ) | | | | 2022 թ բյուջե (հազ. դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
